

ԱԶԳԻԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE **أزتاگ جريدة يومية سياسية وأدبية - للبيئة السؤولة، إيشاد درويشتيان**

1500 Լ.Ո. 74րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 108 (20864) ՀԻՆՂՇԱՐԹԻ, 19 ՅՈՒՆԻՍ 2001 10 ԷՁ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ Է ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ

Կ'ԸՍԷ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ

Հայաստանի մէջ Բրիտանիոյ դեսպան Թիմոթի Ճոնս յայտարարեց, որ 1915էն 1923 Օսմանեան կայսրութեան կողմէ հայերու նկատմամբ իրագործուած Ցեղասպանութիւնը ընդունուած է Բրիտանիոյ մէջ: «Մենք այդ դէպքը սարսափելի իրադարձութիւններու շարք կը նկատենք», ըսաւ դեսպանը: Դիւանագէտը նշեց, որ թէ՛ թագաւորութիւնը եւ թէ քաղաքացիները նոյն մօտեցումը ունին այդ տարիներուն տեղի ունեցած դէպքերուն նկատմամբ:

ՄԸՐ ԿԸ ՀԵՐՔԷ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻ ՄԸ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆ ԸՆՈՂ ԼՈՒՐԵՐԸ

Ներքին գործոց եւ դիւլական ու քաղաքապետութեանց հարցերու նախարար Էրիստ Մըր երէկ հերքեց կարգ մը լրատուամիջոցներու հաղորդած այն տեղեկութիւնները, թէ կառավարութիւնը ներքին տաղ-նապ մը կ'ապրի իր կազմէն ներս լարուածութիւններու պատճառով:

Մըր հաւատեց, որ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ իր յարաբերութիւնները նախարար - վարչապետ յարաբերութեանց իմաստով չինիչ եւ զրական է, իսկ ալլապէս չատ լաւ է:

Մըր նաեւ ըսաւ, որ թմրեցուցիչի ցանքի երեւոյթիւնը զէմ պաշտարի մասին իր հարցազրոյցը ամբողջութեամբ չէ հաղորդուած լրատուական միջոցներուն կողմէ, մինչ եթէ յիշեալ հարցազրոյցը հրապարակած թերթը կարողացուի, հոն ինք յստակօրէն ըսած է, թէ այդ ցանքը փճացնելու գուղահետ պետութիւնը պիտի զիմէ վայն փոխարինող ցանքը քաջաբերելու անմիջական քայլերու, օժանդակելու համար շրջանի բնակչութեան եւ մեղմացնելու անոր ապրուստի գծուարութիւնները:

ՅԱՆՑԱԻՈՐԸ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ Է

Կ'ԸՍԷ ՊԸՐՐԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ երեսփոխաններու հետ իր ունեցած հանդիպումներուն ընթացքին յայտնեց, որ հանրապետութեան նախագահը եւ ինք համաձայն գտնուած են այն խտածանաչումին շուրջ, թէ երկրին մէջ զայնապիտանութիւններու մթնոլորտի «տեղծման հետեւողական փորձերուն նպատակն է խափանել բարեկարգումի եւ փրկութեան ճիգերը: «Օրինակի համար, վերջին դէպքերէն ետք ո՛վ պիտի մասնակցի ելեկտրականութեան ընկերութեան ապապետականացումին», ըսաւ ան:

Պըրրի վերահաստատեց, որ թէ՛ ելեկտրականութեան, թէ՛ միջապային հեռախօսութեան, թէ պետութեան իրաւունքներուն վերաբերեալ բոլոր հարցերուն լուծումը մէկ է. պետական հաստատութիւնները պէտք է տէր կանգնին իրենց պատասխանատուութիւններուն եւ պետութեան հեղինակութիւնը անսակարկելի պէտք է ըլլայ:

Պըրրի իշեցուց, որ խորհրդարանը իր պարտականութենէն աւելին ըրած է, եւ երեք տարի առաջ որդեգրած է աշխարհի տարածքին իր նմանը չունեցող օրէնք մը, որուն հիմամբ, երեք տարուան բանտարկութեան կը դատապարտուի ինքնաբերական գողցողը, արդ ինչ ո՛ւ չէ գործադրուած այս օրէնքը:

Շարք՝ էջ 2

ԻԲՐԵԻ ԶԳՈՒՇԱՅՈՒՄ ԱՐԱՅԱԹԻ

ԻՍՐԱՅԷԼ ՅԱԲԵԼԵԱԼ ՈՒԺ ԿԵԴՐՈՆԱՑՈՒՑ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ

Իսրայէլ երէկ կոուշացումի հրաւեր ուղղեց պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի, յաւելեալ ուժ կեդրոնացնելով Այսրյորդանանի մէջ: Իսրայէլ կ'ուզէ Արաֆաթի հասկցնել, որ պէտք է վերջ տրուի հակաիսրայէլեան յարձակումներուն:

Իսրայէլեան ուժերուն կեդրոնացումը Այսրյորդանանի մէջ չի նշանակեր, որ իրէական պետութիւնը կը ծրագրէ վերագրել պաղեստինեան իշխանութեան յանձնուած շրջանները, յայտարարեց արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս: Ան աւելցուց, որ հակառակ հրապարակուած բոլոր լուրերուն, Իսրայէլ մտադիր չէ վերագրաւելու պաղեստինեան շրջանները: Փերէս, որ կը խօսէր Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէրի հետ ունեցած տեսակցու-

թեան մը աւարտին, դիտել տուաւ, որ Իսրայէլ բաւական կուսկ կերպով հակադարձած է պաղեստինեան վերջին յարձակումներուն, որոնք իրենց կողմէր ու վիրաւորներ խլած են: Փերէս կոչ ուղղեց Արաֆաթի վերջ տալու իրաւոր ու լարուածութիւնը արարքներու: Ան պահանջեց նաեւ, որ Արաֆաթ հակակշիռի տակ առնէ պինեալ ուժերը:

Խօսելով տագնապին պինդութեան լուծում մը տալու առաջարկներուն մասին, Փերէս ըսաւ, որ պաղեստինցիներուն հետ տագնապը միայն խաղաղութեան համաձայնագիրով մը կրնայ լուծուիլ: Ան աւելցուց, որ Իսրայէլի կառավարութեան բոլոր անդամներն ալ կը գիտակցին, թէ վերջաւորութեան միայն բանակցութեամբ կարելի ունեցած տեսակցու-

նոյնիսկ եթէ անոնք երբեմն այլ բնոյթի յայտարարութիւններ կը կատարեն:

Փերէս ըսաւ նաեւ, որ յաւելեալ ուժերու կեդրոնացումը Այսրյորդանանի մէջ հակադարձութիւն է Ժիօ բնակեցման վայրին դէմ երեքշաբթի գիշեր գործուած յարձակումին: Ժիօ կը գտնուի Երուսաղէմի մօտ եւ Իսրայէլ վայն ոչ թէ Այսրյորդանանի, այլ Երուսաղէմի մէկ արւարձանը կը համարէ: Ան աւելցուց, որ Իսրայէլ Ութերու վեհաժողովէն պիտի պահանջէ թափ տալ միջապային ճնշումին, որպէսզի վայրահեռութեան ալիքը մեղմանայ: Իսրայէլ կը պահանջէ, որ միջապային ուժեր ճնշում բանցնեն Արաֆաթի վրայ:

Պաղեստինեան շրջանները չվերագրաւելու Փերէսի յայտարարութիւնը չմեղծարք՝ էջ 2

ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԿՈՒԼԻԵԻ ԅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ՈՐԵԻԷ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՏՆԶԳՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՍՏԱՆԱՅ ԱՐԺԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Կ'ԸՍԷ ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան երէկ «Մետիսմաքս» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի մը ընթացքին յայտարարեց, որ հակառակ անոր որ Պաթիս ռազմատենչ յայտարարութիւնները մտահոգիչ են, սակայն նման յայտարարութիւններով կարելի չէ վախճնել Հա-

յաստանը: Օսկանեան նշեց, որ Լեւոնալին Ղարաբաղի տագնապին խաղաղ լուծման բանակցութիւններու ներկայ տեղադրի միակ պատասխանատուն Ազրպէյճանն է, աւելցնելով, որ կարելի է հետեւցնել, թէ Պաթու տակաւին պատրաստ չէ փոքր զինջումներու:

Ան դրադառնալով

Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիեի «Փարիզեան սկզբունքները հայկական յերիւրանքներ են» արտայայտութեան, նախարար Օսկանեան ըսաւ, որ Կուլիեի խօսքերը ըստ երեւոյթին ուղղուած են Ազրպէյճանի հանրային կարծիքին, եւ կամ ան տեղեկութիւն չունի խաղաղ լուծման գործընթացին մասին: «Մենք մերժած ենք եւ կը մերժենք ուժի կամ ուժի սպառնալիքի կիրարկումը իրեն նման հարցեր լուծելու միջոց, սակայն կ'ուզեմ փառահեղել, որ որեւէ ռազմական ոտնձգութիւն պիտի ստանայ արժանի պատասխան», յայտարարեց նախարար Օսկանեան:

ՆԱԽԱԳԱՀ ՔՈԶԱՐԵԱՆ - ՔԱՏՏՈՒՐԱ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Նախագահ Ռ. Զոհարեան ընդունեց Զատտուրան:

Հայաստանի նախագահ Ռոպէյթ Քոչարեան երէկ ընդունեց պաշտօնական այցելութեամբ Հայաստան գտնուող Սուրիոյ խորհրդարանի նախագահ Ապտէյ Քատէր Քատտուրայի զինուորած պատուիրակութիւնը:

Հանդիպումի ընթացքին նախագահ Քոչարեան զրական գնահատեց Հայ - սուրիական երկկողմ յարաբերութիւնները, միաժամանակ կարեւորեց Սուրիոյ դերը արաբական աշխարհի հետ Հայաստանի յարաբերութիւններուն մէջ: Նախագահը նաեւ զրուստեց 1915ի Եղեռնէն ետք Հայ ժողովուրդին հանդէպ Սուրիոյ ցուցարեւած մարդասիրական մօտեցումը:

Քատտուրա, իր կարգին, յայտարարեց, որ Սուրիա Հայաստանը կը նկատէ բարեկամ երկիր եւ կը փափաքի ընդարձակել երկկողմ համագործակցութիւնը:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան տնտեսական համագործակցութեան հեռանկարները: Նախագահ Քոչարեան կարեւորեց միջկառավարական տնտեսական յանձնաժողովի աշխուժ եւ հետեւողական աշխատանքը:

Կողմերը գոհունակութեամբ արտայայտուեցան միջապային կառույցներու մէջ երկու երկիրներու արդիւնաւէտ համագործակցութեան մասին:

Ապտէյ Քատէր Քատտուրա Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի անունով Ռոպէյթ Քոչարեանը պաշտօնական այցելութեան մը համար հրաւիրեց Սուրիա:

ՅԵՐԱՅԱՅԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ԵՒ ՆԱԽԻԶԵՒԱՆԻ ՄԻԶԵՒ ԱՆՅՔ ՄԸ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՅ

Կ'ԸՍԷ ԷՃԵՐԻԹ

«Թրքիշ Տէյի Նիուզ» թերթը հաղորդեց, որ Թուրքիոյ նախագահը Ահմէթ Նեճմէթ Սեւէր, մերժած է տեսակցութիւն ունենալ Թուրքիա այցելող Քրասակաւ անտարական ընկերութեան մը պատուիրակութեան հետ: Մերժումին պատճառը Ֆրանսայի Օերակոյտին կողմէ հայկական Ցեղասպանութեան ճանաչումն է:

Պատուիրակութիւնը հանդիպում ունեցած է վարչապետ Պիլիքի Էճեմիի հետ, որ թուրքաֆրանսական յարաբերութիւններու բարելաւման իրեն նախապայման ֆրանսացիներէն պահանջած է Հայաստանի դէմ կեցածք մը որդեգրել: Էճեմի նաեւ յայտնած է, թէ «Հայկական ուժերը անմիջապէս եւ առանց նախապայմանի պէտք է հեռանան Լեւոնալին Ղարաբաղէն, եւ Հայաստան Ազրպէյճանի եւ Նախիջեւանի միջեւ անցք մը պէտք է բանայ»:

ԸՍՏ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՊԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒՆ

«ԱԶՐՊԵՅՃԱՆ ԵՐԿՈՒ ԱՄՍՈՒԱՆ ԸՆԹԱՅԻՆ ԿՐԱՅ ՅԱԶՈՒՆԱԿ ԱՊԱՀՈՎԵԼ»

Ազրպէյճանի պաշտպանութեան նախկին նախարար, այժմ սպաններու իրաւունքներու պաշտպանութեան կոմիտէի նախագահ, զօրավար Մեհտիւն Ազրպէյճանական «Կապէթ 525» թերթին մէջ երէկ հրատարակուած յօդուածի մը մէջ յայտարարած է, թէ եթէ Ազրպէյճան պատերազմի սկսի, անկասկած յաղթանակ կը տանի: «Ես չեմ կարծեր, որ խաղաղ լուծումը կրնայ երաշխաւորել Ղարաբաղի ամբողջական ենթակայութիւնը Ազրպէյճանին: Հարցը միայն պատերազմի դաշտին մէջ կարելի է լուծել», յայտնած է Մեհտիւն:

Ըստ Մեհտիւնի, Ազրպէյճանի բանակը վերջին քանի մը տարիներու ընթացքին բաւական հզօրացած է եւ պետութիւնը պարտաւոր է յստակ ծրագիր ներկայացնել «վերադարձնելու համար գրաւուած հողերը»: Ան նշած է, թէ 40 հազարնոց արհեստավար բանակ մը ստեղծելու համար պէտք է օգտուիլ Թուրքիոյ, Ռուսիոյ եւ ՕՊԱՆԻ փորձառութեան: Ըստ Մեհտիւնի, Ազրպէյճան երկու ամսուան ընթացքին յաջողութեամբ կրնայ աւարտել «ապատագրման» ռազմական գործողութիւնը:

«ԱՐԻՆ» ՀԱՄԱԼԻՐ
ՊՈՒՐՃ ԸԱՍՈՒՏԻ ՄԷՋ
ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹ

ՇԵՏԱԵՐԵՐԱԿԱՆ ԳԻՆԵՐՈՎ ԾԱԽՈՒ ԵՆ
30ԷՆ 300 ԶԱՌ. ՄԵԹՐ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՄԲ
ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ, ԽԱՆՈՒԹՆԵՐ, ՍՐԱՇՆԵՐ

ՊՈՒՐՃ ԸԱՍՈՒՏԻ ՄԷՋ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ
«ԱՐԻՆ» ՀԱՄԱԼԻՐԸ
ԿԸ ԴԱՌԱՅ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ

Յաւելեալ
մանրամասնութեանց
համար հեռաձայնել
03/618806 թիւին

ՌՈՒՍԻԱ Կ'ՈՒՂՂՈՒԻ ԴԵՊԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶՏԱԿԱՆԱՅՈՒՄ

Կ'ԸՍԵ ՓՈԽԹԻՆ



Նախագահ Փութին մամլոյ ասուլիսի ընթացքին:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին. երէկ, Կրեմլին մէջ հարիւրաւոր թղթակիցներու ներկայութեամբ կայացած անսխալութեամբ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, թէ Ռուսիա դէպի տնտեսական ապստանականացում կ'ուղղուի:

Փութին նշեց, որ ըստ հարկերու նոր համակարգին, ռուսական հարկերը՝ 13 առ հարիւր անհատներու եւ 24 առ հարիւր շահաբեր ընկերակցութիւններու համար, նուազագոյնը պիտի ըլլան Եւրոպայի տարածքին: Ան նաեւ նշեց, որ վերջ պիտի դրուի տնտեսութեան մէջ կառավարական անտեղի միջամտութիւններուն: Ըստ Փութինի, Ռուսիոյ մէջ տնտեսական բարգաւաճման համար օրէնսդրական անհրաժեշտ համակարգ պիտի ստեղծուի:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՓՇՈՏ ՀԱՐՅԵՐ ՕՐԱԿԱՐԳԻ ՎՐԱՅ ՊՈՒՇ ԶԵՆԱՐԿԵՑ ԵՐՐՈՊԱԿԱՆ ԻՐ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՊՏՈՅՏԻՆ

Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ երէկ ձեռնարկեց Եւրոպական իր երկրորդ շրջապտույտին, որուն ընթացքին ան պիտի դիմագրաւէ փշոտ շարք մը հարցեր՝ հրթիռային պաշտպանութիւն, կլիմայական փոփոխութիւն, տնտեսական ընդհանրական դանդաղած եւ «սթէմ» բքիչներու շուրջ հետապօստութիւններ:

Շարք՝ էջ 10

ՌԻԹԵՐՈՒ ՎԵՐԱԺՈՂՈՎԸ ԿԸ ԴԻՍԱԳՐԱԻ ԸԱՄԱՇԽԱՐԱՅՆԱՅՈՒՄԻ ԴԵՍ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐՈՒ ՎՏԱՆԳԸ

ՃԵՆՈՎԱ, 18 (ՌՈՅԹԸ).— Իտալացի հազարաւոր ոստիկաններ Չորեքշաբթի օր ամբողջօրեայ կեդրոնը՝ շարաթափէին նախատեսուած հարաւարարուեցողական նացած երկիրներու Ուլթերու խմբակին վեհաժողովը պաշտպանելու համար՝ համաշխարհայինացումը դէմ ցուցարարներու խռովութիւններէ:

Ոստիկանութեան այս քայլը դժբաղդութեան դրուեցաւ մինչ ապահովութեան պետութեան մասով մտաւարութիւնները թափ կը ստանալին վեհաժողովին նախօրեակին: Շրջափակումէն քանի մը ժամ ետք, ականուած ծրար մը պայթած է Իտալիոյ վարչապետ Սիլվիո Պերլուսոնի հակակշիռին եւ թակալ Միլանիոյ պատկերասրահին մէկ կայանին մէջ:

Պայթեցումը, որուն պատճառով կին մը թեթեւօրէն վիրաւորուած է, կը յաջողէր երկու-

շարթի օր պատահած նմանօրինակ դէպքի մը, երբ ականուած նամակ մը՝ ուղղուած Ճենովայի մէկ ոստիկանատան, երիտասարդ ոստիկան մը վիրաւորած էր:

Արձանագրուած են քանի մը ծախսող յարձակումներ եւ շարք մը կեղծ ահազանգներ:

Աւելի քան 100 հազար ցուցարարներ, որոնք կը ընդգրկեն աշխարհի տարածքին հարուստ երկիրներու տիրապետութեան դէմ, յայտարարած են, թէ Ուլթեր օր լացուելիք տարեկան վեհաժողովը «շրջափակումի պիտի ենթարկեն»:

ԱՄԵՐԻԿԱՆ ՇՐՋԱՐԱՅԻՆ ՏՐԱԳԻՐ ՎԵՐԱԺՈՂՈՎԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Հրթիռային պաշտպանութեան վահան մը կը ծածկէր ծրարները երէկ

ԻՐԱՆ

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ – ԲԱՐԵԿԱՐԳ-ԶԱԿԱՆ ԽՈՒԼ ԲԱՆՈՒՄ

Իրանի խորհրդարանը, ուր մեծամասնութիւն կը կազմեն բարեկարգչականները, աշխատանք կը տանի, որպէսզի բարեկարգչականներ ալ մաս կազմեն սահմանադրութեան գործադրութեան հսկող պահակաւորական խորհուրդին:

Յիշեալ խորհուրդը կը բաղկանայ 12 անդամներէ, որոնց վեցը կրօնաւորներ են եւ

կը նշանակուին Իրանի գերագոյն դեկամար Ալի Խամենէի կողմէ: Մնացեալները փաստաբաններ են, որոնց նշանակումը կը վաւերացուի խորհրդարանին կողմէ: Դատական իշխանութիւնները 12 փաստաբաններու անուանացանկ մը կը ներկայացնեն խորհրդարանին, որպէսզի վեց հոգի ընտրէ: Նկատի ունենալով, որ դատա-

տիրական էին Ուլթերու արտաքին գործոց նախարարներու նախնական ընթացքին, վեհաժողովին ընթացքին ընդհանրական շարք մը այլ հարցերու քննարկումէն առաջ:

Հրթիռային ծրարներ եւ իրաքի դէմ պատժամիջոցներ օրակարգի գլխաւոր նիւթերը եղած են Մ. Նահանգներու եւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարներուն միջեւ տեղի ունեցած հանդիպումի մը:

Իկոր Իվանով շեշտած է, թէ Մոսկուա պատրաստ է հրթիռային ծրարները գծով Մ. Նահանգներու հետ յայնածիր արտօնի մը ձեռնարկելու:

Քոլին Փաուլթի հետ երկու ժամ տեւողութեամբ տեսակցութեանէ ետք, ան հրապարակաւ չէ կրկնած իր կառավարութեան ընդդիմութիւնը՝ հրթիռային պաշտպանութեան նախաձեռնութեան:

ԻՎԱՆՈՎ ԵՒ ՓԱՌԸԼ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԻՐԱԲԻ ՀԱՐՅԸ



Չախէն աջ՝ Իվանով եւ Փաուլթի: Իվանովի ետին՝ Սոլաւա:

ՀՌՈՄ, 18 (ՌՈՅԹԸ).— Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով լսաւ, որ Մոսկուա պիտի գործակցի Միացեալ Նահանգներուն հետ, համաձայնութիւն մը գոյացնելու համար Իրաքի հանդէպ ՄԱԿի պատժամիջոցներուն մասին:

Իվանով, որ կը խօսէր Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլթիի հետ հանդիպումի մը աւարտին, դիտել տուաւ, որ Մոսկուա համաձայն է ու պատրաստ աւելի սերտ գործակցութիւն մը ունենալու Ուաշինկթընի հետ, յատկապէս՝ Ապախովութեան խորհուրդին մէջ: Իվանով աւելցուց, որ Փաուլթիի հետ մանրամասնօրէն քննարկած է Իրաքի հարցը:

Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա կը փորձեն Ապախովութեան խորհուրդի համաձայնութիւնը ապահովել Իրաքի հանդէպ պատժամիջոցներու նոր ծրագիրի մը մասին, որ քանի մը շաբաթ առաջ ձախողութեան մատնուեցաւ Ռուսիոյ ընդդիմութեան պատճառով: Ռուսիա սպառնացած էր վերջոյի ենթարկել ծրագիրը եթէ քուէարկութեան դրուի:

Միւս կողմէ, Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին յայտարարեց, որ ՄԱԿի պատժամիջոցները ապարդիւն են, ան սակայն Պաղտստին կոչ ուղղեց՝ արտօնելու ՄԱԿի վեցի քննիչներուն մուտքը Իրաք:

Փութին նաեւ նշեց, որ Ուաշինկթընի եւ Լոնտոնի առաջարկած «խելացի պատժամիջոցներ»

ընդհանուր ապարդիւն պիտի ըլլան:

ՄԱԿԵԴՈՆԻԱ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ ՄԸ ՓՐԿԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

ՄՔՈՓԵԼ, 18 (ՌՈՅԹԸ).— Արեւմուտքի պատուիրակներ Չորեքշաբթի օր փորձած են փրկել Մակեդոնիոյ համար մշակուած խաղաղութեան ծրագիր մը, որ մասամբ մերժուած էր երկփեղկուած հանրապետութեան մէջ համայնքային տիրական խմբակին կողմէ:

Մակեդոնացի քաղաքական անձնաւորութիւններ մերժած են առաջարկ մը՝ այսպէսով կէս պաշտօնական լեզու մը դարձնելու գծով բարեկարգչական ծրագիրի մը ծիրէն ներս՝ այսպէսով փոքրամասնութեան քաղաքային աւելի մեծ իրաւունքներ տալու համար:

Մակեդոնիոյ ազգայնական վարչապետ Լիուպչօ Կեդրկիեւսքի մօտիկ «Էլէէր» թերթը աւերակացի պատուիրակ ձեյմա Փարտիուսի եւ Եւրոպական Միութեան պատուիրակ Յրանսուա Լեոթարը ամբաստանած է «գալթեցուցիչ» փորձերու ձեռնարկելու յանցանքով՝ անշատողական այսպէսով քննարկելու պարտադրելու համար մեծամասնութեան:

Միացեալ հաղորդագրութեան մը մէջ, Փարտիուսի Լեոթար շեշտած են, թէ ամերիկեան եւ Ե. Միութեան ծրագիրը «կը պահպանէ Մակեդոնիոյ հանրապետութեան գերիշխանութիւնը, հողային ամբողջականութիւնը եւ միացեալ բնոյթը»:

ՃԱՓՈՆ ԶՕՐԱՎԻԳ ԿԸ ԿԱՆԳՆԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՃԻԳԵՐՈՒՆ

ՊՈՆ, 18 (ՌՈՅԹԸ).— Գերմանիոյ մէջ տեղի ունեցող ՄԱԿի կլիմայական հարցերու մասին բանակցութիւններուն, Մ. Նահանգներ Չորեքշաբթի օր կը թուէին մեկուսացած ըլլալ, նկատի ունենալով, որ ձափոն պարակցութիւն արտաքինութեան է ընդհանրական շեքմանութիւն վերաբերող Քիոթոյի համաձայնագիրը փրկելու եւրոպական ճիգերուն:

Մինչ այդ, նախագահ Ճորճ Պուշ, որ Չորեքշաբթի օր շրջապտույտի մը համար Եւրոպա ուղղուած է, յատկապէս շեքման է, թէ իր որոշումը պիտի չփոխէ, ինչ կը վերաբերի Քիոթոյի համաձայնագիրին, որուն գործադրութիւնը կը մերժէ ան:

15 երկիրներէ բաղկացած Եւրոպական Միութիւնը, որ Մ. Նահանգներէ ետք շեքմանոցի կապեր պարտադրող երկրորդ մեծագոյն խմբակն է, կը փորձէ ձարտարարութեամբ անցած երկիրներու մօտ Քիոթոյի համաձայնագիրին պարզապէս կանգնող, կշիռ ունեցող մեծամասնութիւն մը ապահովել, որպէսզի պայն յառաջիկայ տարի ի պօրու դարձ-

նէ: Ստանդ ամերիկեան պարակցութեան, Ե. Միութիւնը ձափոնի պարակցութեան կարիքը ունի համաձայնագիրի մը հանդէպ, որ մշակուած էր 1997ին ձափոնի նախկին մայրաքաղաք Քիոթոյի մէջ:

ձափոն, Լուստալիոյ եւ Քանադայի նման, չ'ուզէր Ուաշինկթընը մեկուսացած ձգել: Սակայն անոր կենսոլորտի նախարարը Երեքշաբթի օր յայտնած է, թէ յառաջիկայ տարի անոր գործադրութիւնը պիտի չուշացնէ:

Քանադա նոյնպէս Չորեքշաբթի օր փորձած է փարատել Եւրոպացիներու մտահոգութիւնները, քննելով, թէ պօրաւոր կը կանգնի շեքմանոցի կապերու արտահետումները կրճատելու թիրախներուն:

Պոնի մէջ տեղի ունեցող բանակցութիւնները, որոնք երկուշաբթի օր սկսած են եւ 2 շաբաթ պիտի տեւեն, կը նպատակադրեն յատկօրէն յայտնել, թէ Քիոթոյի համաձայնագիրը գործնականօրէն ինչպէս պիտի գործէ:

ԱՆՏԱՌԻՆ ԴԻՉԸ

Մահամերձ է անտառը: Գազանային տնրոցով լեց-ւած՝ մթնոլորտը: Թռչունին ոչ մէկ դայլայլ՝ անոր հսկայ, սաղարթախոր ծառերուն: Միայն հունդիւն, ցաւատանջ ոռնոց՝ քիչ մը ամէն կողմ զլտապատ ին-կած մեծ թէ փոքր զագաններու երախներէն...

Արեան ճապաղիքը արդէն բշեր տարեր է վայրի թի-թեռներն ու մեղունները՝ տակաւին երէկ կեանքով շէնչող, արջը, վագրը, յովազը, այլեւ աղուէսն ու դայլը իր գոյութեան իմաստը դաւանող անտառին ծո-ցէն: Բոթոթ ու կորիւն՝ պարծանքն անտառին, լա-ցակումած կը տնքան, ուշակորոյս ու աներազ՝ աչ-քերուն մէջ դեղին սաքսափ...

Մահամերձ է անտառը...

Բայց ո՛ր է թագաւորը...

Անտառի արեւելեան ափին, հաստափոր ծառերու միջեւ կիսամեռ փռուած է առիծը, անտառին թա-զաւորը, դառնալի կծկումներու անձաւտուր, մարմ-նին վրայ՝ թունաւոր խայթոցներէ գոյացած վէրքեր: Սողունները ինչպիսի մոլոցեցով են փրցուցեր միսե-րը, եւ հիւմ, ցաւին ճազնութենէն հազիւ թէ կարե-նար շնչել ան, իսկ ուղեղին մէջ հետզհետէ կը խորա-նար գալլոյթը՝ ինքնադատումի պարոյկներով շրկա-ցած...

Մինչ անտառը կ'ոգեվառէր, կը կաղկանձէր ան-յուսութեան ճիրաններուն մէջ, գետնէն, անտառին ամէնէն՝ ստորին մակարդակէն կը լսուէր շարժում, կը տարածուէր թունալից ֆշոց: Յաղթանակի գի-նովութենէն արբիւր, հողերուն մէջ տապալակող, խրախճանող սողուններուն, օձերուն ու խլուրդնե-րուն ֆշոցն էր անիկա, անսանձ սուլոյցը գետնա-քարներուն, որոնք զագաններուն անկումին ի տես նոր թափ կու տային իրենց անողնայար բնազդնե-րուն, մերթ կը սողային խելակորոյս՝ երբեմնի խորխորներուն, բլուրէ բլուր խոյսցողներուն թէ եր-գեցիկ թռչնազգիներուն լաշն ու փետուրը իւրացու-ցած ըլլալու պատրանքէն հարուած, մերթ ալ կը ֆշաշա-յին ինքնամոռաց՝ անտառը իրենց խաղին ենթարկած ըլլալու հաճոյքէն շմորած...

Օձերուն թոյնէն աւելի սուր ցաւ մը ծակեց ան-տառին սիրտը: Կշեց պահէ ու վեր-վար ըրաւ կա-ցութիւնը, թափանցեց առիւծին ապրումներուն, ականջը դրաւ կաղկանձողներուն, ու ինքզինք աւելի մօտ զգաց մահուան: Հասկցաւ, որ իրերու ներկայ դրութեան մէջ անտառը ինքն էր եղած մեղաւորը: Այո՛, իր դարաւոր փառքի կորստեան գալարումնե-րուն մէջ, անտառը վերջապէս ըմբռնեց իր հոգեվար-քին պատճառը. այդ տարին շատ, շատ առատ էր եղած որսը, եւ զագանները այնքան յովաքած, որ ան-տառը չեղում կատարած էր իր անգիր օրէնքէն եւ թոյլ տուած, որ անտառայարները զագաններուն իսկ հովանիին տակ սրն իրենց ախորժակներն ու ամրաց-նեն զարշապարները...

Ակնկալուածէն աւելի մեծահոգի էր վարուած ան-տառը՝ դաւադիրներուն նկատմամբ: Յովաքցումէն ընդամացած՝ գանոնք համարեմ իր խաղալիքները յո-վագներուն ու արջերուն եւ միայն հի՛մա էր, որ կ'ըմբռնէր, թէ ինչպէս սողունը, խլուրդը, օձն ու առնէտը շահագործած էին առիթը ու մղում տուած իրենց դիւային ախորժակներուն, անտառին տիրե-լու այնքան փայփայուած իրենց թաքուն երազանք-ներուն:

Անոնք, զարշելները, առանց իսկ վայրկեան մը կորսնցնելու անցեր էին գործի, գոյացուցեր համա-խոհութիւն եւ իւրաքանչիւրը ի՛ր ցեղը բազմացնելուն մէջ էր գտեր իր յաղթութեան գրաւականը, մինչեւ որ օր մը, կուշտ ու կուռ զագաններուն հանգիստի մէկ պահուէն տրուած էր ազդանշանը. «Սողաքէ՛ք, յարձակեցէ՛ք, խածէ՛ք, փրցուցէ՛ք, մահացու ձեր թոյ-ները ամէնուրեք արժակեցէ՛ք... մերն է անտառը, մենք ենք անոր աչերը»...

Անտառին յիշողութիւնը արիւնեցաւ: Ծանր էր հարուածը, անսպասելի, յանկարծական... ու մանա-ւանդ՝ անչափօրէն անարդական... եթէ մահանալ մը կար, գոնէ սողուններուն թոյնով չըլլար... Բայց նա-եւ վերջին, ճակատագրական գերլարումի մը հաւատա-քը շարժեցաւ մէջը... անտառը հերոսական անասելի ճիգով մը փորձ ըրաւ հաւաքելու ուժերը եւ արձակեց սուր ճիւղ՝ մերձ վերապրելու կամքով շարդալուած:

Ճիւղը լոյսի արագութեամբ զարնուեցաւ արիւնա-քած թագաւորին եւ դէպի կեանք հրեց զայն... Ու մինչ սողունը կը կարծէր, որ սողալ-խայթելով, սո-ղալ-խայթելով յաջողած էր իրեն ենթարկել անտառը, առիւծը բռնեց վէրքերուն վրայ փշրուող ճիւղ ու նե-րանձնական մղումով մը լայնցուց զայն իր խորհրդ-դաւոր մոնչիւնով եւ տարածեց մթնոլորտին մէջ: Պա-տասխանը չուղացաւ: Մահու-կենաց պայքարին մէջ ուժեղները սկսան լափիլզել իրենց վէրքերը, մինչ թոյ-լերն ու յուսահատները աղիողորմ հունդիւններով հրաժեշտ տուին անտառին ու անհետ կորան:

Վերականգնումը դիւրին չեղաւ... արիւնածոր վէրքեր, վայնասիւններ, լուսալէռութեան վայրկեան-ներ, բայց, միաժամանակ, դէպի կեղտոն ձգտում, արի-արանց մարտնչում, մահուան լարիւրինթոսին մէջ կեանքի՝ երակի փնտաւորը...

Գագաններուն բնազդային գիտակցութիւնը չես գիտեր անտեսանելի ինչ ճամբաներով յանկարծ իրա-րու միացուց թագաւորին ու քաջերը եւ... տո՛ւր որ կու տա՛ս... Վերապրումի հետզհետէ ահագնացող ոռ-նոցները ալիք-ալիք շարժեցին գետինը, տուին լայն-քին եւ խոռոչներէն դուրս թափեցին խլուրդներուն ճալթած դին, լարձրացան ծառերը եւ վա՛ր նետեցին մորթագերծ սողունները, կիսեցին ժաղերը, փորեցին անկիւնները եւ ծակեցին՝ առնէսները...

Կենսալից է անտառը... Կանաչներուն՝ նորափե-տուր ճլլոց... ամէնուր զագանային անդորը, դառն փորձառութեամբ ամրապրուած... ահա թէ ինչո՛ւ ժամանակ առ ժամանակ անտառին մէջ կը լսուի խորհրդաւոր ոռնոց մը, որ կ'ուժեղանայ քիչ-քիչ, կը ծաւալի, կը տարածուի, կ'ամրանայ՝ զագանային յօ-շոտող նայուածքներ փռելով աջ ու ահեակ...

Ս. Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ՎԼԱՏԻՄԻՐ ՆԱԶԱՐԵԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԿՐ ԿՈՉՈՒԻ

13 Յուլիսին Ազգային ժողովի նախագահ Արմէն խաչատրեան հրամանագիրով մը իր պաշտօնէն ազատ կացուցեց Ազգային ժողովի իրաւարանական վարչութեան պետ, իրաւարանական գիտութիւններու դոկտոր, Հայաստանի ժողովրդական կուսակ-ցութեան անդամ Վլատիմիր Նազարեանը: Այս որո-շումին պատճառը ենթակային հանգստեան կոչուե-լու տարիքն է:

Այլ որոշումով մը Ազգային ժողովի նախագահը Ազգային ժողովի իրաւարանական վարչութեան պե-տի պաշտօնակատար նշանակեց նոյն վարչութեան փոխ պետ Սիմոն Մխիթարեանը: Որոշ տեղեկութիւն-ներու համաձայն, Հայաստանի ժողովրդական կու-սակցութեան անդամ պատգամաւորները դժգոհելով այս որոշումէն՝ պաշտօնապէս դիմած են Արմէն խա-չատրեանին՝ որոշումը վերատեսութեան ենթարկելու համար:

16 Յուլիսին, Ազգային ժողովին մէջ շրջող ան-պաշտօն տեղեկութիւններու համաձայն, Հայաստա-նի ժողովրդական կուսակցութեան անդամ շուրջ 10 պատգամաւորներ, որոնց կարգին նաեւ Ազգային ժողովի ղեկավարութիւնը, մտադիր են հեռանալու Հայաստանի ժողովրդական կուսակցութենէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱՌԱՐՏԵՑԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՅՈՒՅԱԿԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Այս տարուան աշնան կայանալիք մարդահամարի նախապատրաստական աշխատանքները հասած են իրենց վերջին հանգրուանին: Ըստ Հայաստանի վի-ճակագրական ծառայութեան մարդահամարի վար-չութեան պետ Սամուէլ Ներսիսեանի, ներկայիս կ'ա-մփոփուին Հայաստանի տարածքին գտնուող շէնքե-րու, շինութիւններու եւ մնացուած արձանագրութիւն ունեցող քաղաքացիներու ցուցակներու կազմութեան աշխատանքներուն արդիւնքները:

Ցախորդ հանգրուանը պիտի ըլլայ կազմակերպչա-կան ծրագիրներու կազմութեան աշխատանքը: Պիտի ճշդուի մարդահամարի աշխատանքներուն մասնակ-ցող աշխատակիցներուն թիւը, ըստ տարածքի: Հա-յաստան պիտի լրաժնուի 200 մարդահամարային , 2100 հրահանգչական եւ 12 հազար հաշուարարային շրջաններու:

Վարչութեան պետին համաձայն, մարդահամարի կայացման աշխատանքներուն ցարդ մասնակցած է երկու աշխատանքային խումը, որոնք ընդգրկած են 660 հոգի: Անոնց օգնականներն ու խորհրդատուներ-ը պիտի շարունակեն իրենց աշխատանքները հինգ ամիս եւս, իսկ մնացեալ մասը՝ ցուցակագրողները, արդէն աւարտած են իրենց աշխատանքը:

Մարդահամարի աշխատանքներուն պիտի մաս-նակցին կեղրոնական աշխատանքային կազմի ան-դամները՝ 60 հոգի, եւ 721 ժամանակաւոր աշխատա-կիցներ՝ 20 հազար դրամ աշխատավարձով: 1 Սեպ-տեմբերին մարդահամարի շրջանային պետերը, տե-ղակները եւ հրահանգիչները պիտի սկսին իրենց աշխատանքներուն, իսկ 1 Հոկտեմբերին հաշուարար-ները պիտի միանան անոնց:

Ներսիսեան յայտնեց, թէ կը նախատեսուի 1,5 միլիոն հարցարաններ տուարկել: Իւրաքանչիւր ըն-տանիքի պիտի տրամադրուի հարցարան մը, որ կը լրագրանայ ընդհանուր բնոյթ կրող 32 եւ բնակարա-նային պայմաններու վերաբերյալ 15 հարցումնե-րէ: Միաժամանակ, ան պարզաբանեց նաեւ, որ հար-ցարաններու թուաքանակը երկրի ընտանիքներու թիւը կը ներկայացնէ: Գալով աշխատանքի ծախսե-րուն, ան փաստեցուց, որ այդ հարցը լուծուած է: Մինչեւ փարկեան լրանակցութիւնները գոյութիւն ունեցող 206 միլիոն սովորի բացը փակուած է: Շնոր-հիւ Համաշխարհային Դրամատան միջնորդութիւննե-րուն, շարք մը երկիրներ՝ Գերմանիա, Զուիցերիա, Հո-լանտա եւ ուրիշներ աջակցութիւն խոստացած են:

Ըստ Ս. Ներսիսեանի, մարդահամարի ընդհանուր ծախսերը նախատեսուած են, 955 միլիոն դրամով, որուն 200 միլիոնը պետական գանձէն պիտի տրա-մադրուի, 350 հազար սթերլինը՝ անգլիական Տի. Էֆ. Այ. Տի. գործակալութենէն, 200 հազար սովոր՝ Հա-մաշխարհային Դրամատունէն, իսկ ՄԱԿի կողմէ՝ 520 հազար սովոր:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ 17ԴԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

12 Յուլիսին Երեւանի բնագիտութեան հիմնարկի նիստերու դահլիճին մէջ տեղի ունեցաւ Հայկական կարմիր խաչի ընկերութեան 17րդ համագումարը՝ մասնակցութեամբ Հայաստանի մարզերէն 155 պատ-ւիրակներու եւ հիւրերու:

Համագումարին ընթացքին Հայկական կարմիր խաչի ընկերութեան նախագահի պաշտօնակատար Գուրգէն Բոչեան հանդէս եկաւ հաշուետու զեկոյ-ցով, որմէ ետք կատարուեցան կանոնադրական կարգ մը փոփոխութիւններ:

Հայկական կարմիր խաչի ընկերութեան յաւերժ պատուաւոր նախագահ ընտրուեցաւ Աշոտ Սարգս-եան, որ 1999-2000 թուականներուն եղած է այս ըն-կերութեան նախագահը եւ մեծ դեր ունի ընկերու-թեան ստեղծման եւ տարած զործունէութեան մէջ: Այժմ ան կը գտնուի Պոսնիա եւ այնտեղ կ'իրակա-նացնէ Կարմիր խաչի առաքելութիւնը: Այնուհետեւ կայացաւ նախագահի ընտրութիւն: Առաջարկուած էին երկու թեկնածուներ՝ Հայկական կարմիր խաչի ընկերութեան նախագահի պաշտօնակատար Գուրգէն Բոչեան եւ նոյն ընկերութեան առաջին օգնութեան ռեսուրսական կեղրոնի ղեկավար Մովսէս Պօղոս-եան: Տեղի ունեցաւ փակ զաղտնի քուէարկութիւն եւ իւրաքանչիւր թեկնածու հաւաքեց 71 ձայն: Սեպ-տեմբեր ամսուան ընթացքին տեղի պիտի ունենայ ար-տակարգ համագումար եւ կրկին պիտի կայանայ նա-խագահի ընտրութիւն:

ԲԱՏՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայաստանի տեղեկա-տուութեան եւ հասարա-կութեան հետ կապերու վարչութիւնը կը յայտնէ, թէ Հայաստանի վարչա-պետ Անդրանիկ Մար-դարեանի որոշումով Հայաստանի կառավա-րութեան կազմին մէջ տեղի ունեցած են քաւ-րալից կարգ մը փոփո-խութիւններ: Տեղրան խաչատրեան եւ Դաւիթ Աւետիսեան նշանակ-ւած են Հայաստանի ելեւ-մուտքի եւ տնտեսու-թեան փոխ նախարար-ներ, Սամուէլ Պետրոս-եան ազատ կացուցուած է Հայաստանի պետական եկամուտներու փոխ նա-խարարի պաշտօնէն եւ այդ պաշտօնը ստանձ-նած է Սարգիս Գրիգոր-եան: Սերգէյ Մանուկ-եան ազատ կացուցուած է Հայաստանի վարչապե-տի վերահսկողական ծա-ռայութեան պետի պաշ-տօնէն, եւ զայն փոխա-րինած է Գագիկ Պետրոս-եան, որ նաեւ ստանձ-նած է վարչապետի խորհրդականի պարտա-կանութիւնները:

Վարչապետին երկու ալ որոշումներով կառա-վարութեան աւուրթեր նոր ստեղծուած մաքա-րի պետական կոմիտէի փոխ նախագահներ նշա-նակուած են Սամուէլ Թադեւոսեան եւ Գագիկ խաչատրեան:

ԱՇՈՏ ՊԼԵԵԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ

Նախապէս հաղորդած էինք, թէ 13 Յուլիսի երե-կոյեան, իր բանտարկու-թեան ժամանակաշրջա-նին աւարտէն առաջ (դատապարտուած էր 5 տարուան եւ կրած էր մէկ երրորդ րաժիթը) պայմանականօրէն ազատ արձակուած էր «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրի նախկին տնօրէն Աշոտ Պլեեան:

Անոր կինը՝ Արմինէ ՕՏանեան ըսած է, թէ Աշոտ Պլեեան Հայաստա-նի քրէական ու գինուո-րական գործերով վճա-րեկ դատարանին մօտ պիտի բողոքէ 18 Մայի-սին վերադառնալից դատա-րանին կողմէ իրեն նկատմամբ արձակուած դատաւճիռին դէմ:

Յայտնեք, թէ կրթա-կան համալիրի նախկին տնօրէնը 30 Մայիսին վճարելի բողոքը ներկա-յացուցած էր, սակայն 4 Յուլիսին իր բողոքը ետ առած էր: Աշոտ Պլեեան այդ պատահածը հիմնա-ւորած էր անով, թէ վճարելիք ատենը բողո-քը վերանայելու ընթաց-քին անտեսած էր դատա-վարութեան կողմի իր իրաւունքները՝ զինք զրկելով մրցակցային դատավարութեամբ իր անմեղութիւնը պաշտ-պանելու կարելիութե-նէն:

STUDIO
Lantern
• Կը ստանձնէ ուրախ առիթներու video
Նկարահանումներ
Դեռ. 01-266866
Եւ 03-995399

1700ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1700 ՀՈԳԻ ՊԻՏԻ ՄԿՐՏՈՒԻ ՍԻՆԻՔԻ ՄԵՋ

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի յանձնախումբին նախա-ձեռնութեամբ եւ Մեսրոպ արք. Աշճեանի ու Սիւնեաց թեմի առաջնորդ Արարհամ եպս. Մկրաչեանի ձե-ռամբ, 24, 27 եւ 28 Յուլիսին Սիւնիքի մէջ 1700 հոգի պիտի մկրտուի:

1700ամեակի պետական յանձնախումբը կը հաղորդէ, թէ Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը իր օրհնութիւնը տուած է այս նախաձեռնութեան: Մկրութեան արարողութեան պիտի մասնակցին Հա-յաստանէն եւ Սփիւռքէն լազմաթիւ հոգեւորական-ներ եւ հիւրեր:

Մկրութեան ընդհանուր կնքահայրն է Միացեալ Նահանգներու Փրովտենս քաղաքի բնակիչ Վարդգէս Մարգարեան, սակայն նկատի ունենալով, որ եկեղե-ցական կարգի համաձայն իւրաքանչիւր մկրտուող պէտք է ունենայ իր առանձին կնքահայրը, որոշուած է կնքահայր չունեցողներուն կնքահայր նշանակել բանակի զինուորները:

Երեք օրերու ընթացքին մկրտութիւններ տեղի պի-տի ունենան Սիւնիքի պատմական զանազան շրջա-ններու մէջ. 24 Յուլիսին՝ Եղէկանձորի Սիրանուշ ճամ-բարին մօտ, Եղեգիս գետի աջ ափին, Հերմոնավանքի հովանիին տակ, 27 Յուլիսին՝ Գորիս գետի ափին, առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մօտ, իսկ 28 Յուլիսին՝ Տաթեւի Ս. Պօղոս - Պետրոս տաճարին մէջ:

Այս խորհրդանշական թիւով մկրտուողները պի-տի ստանան խաչը եւ նուէրներ: Արարողութիւննե-րուն պիտի յաջորդեն տօնախմբութիւններ:

«ՏԱԹԵԻ» ՊԱՐԱՆՈՒՄԸ ՕԹՈՊԵՒՍՈՎ ՊԻՏԻ ԴԱՄԱՐԴԷ ՍԿՈՎՏԻՎ

Սկովտիոյ մէջ տեղի ունենալիք «Ապերտին Երի-տապարդական Միջազգային Փառատօնին» աշխարհ-ի տարրեր կողմերէն եկած արուեստի խմբակներու կողքին պիտի մասնակցի նաեւ Հայաստանէն «Տա-թեւ» ազգագրական պարախումբը:

«Տաթեւ» պարախումբին անդամները դէպի Բրի-տանիա իրենց ճամբորդութիւնը պիտի կատարեն օթո-պիւլսով՝ կտրելով 6000 մղոն ճամբա: Անոնք ճամբայ եւն ունենան 14 Յուլիսին եւ իրենց ճամբուն ընթացքին ելոյթներ պիտի ունենան շարք մը երկիրներու, որոնց շարքին՝ Ռուսիոյ, Ֆինլանտայի, Շուէտի եւ Դանիոյ մէջ:

Ռթոպիւսով ճամբորդելու հայ արուեստագէտնե-րուն որոշումը զարմացուցած է փառատօնին կազ-մակերպիչները, որոնք զայն համարած են հերոսա-կան ճիգ մը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԵՆ ԲՈՂՈՔԻ ՀԱՒԱՔ ՄԸ

«Նոյնաճ Տապան» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի գիտնականները հաւաք մը կազմակեր-պած են բողոքելու համար Ակադեմիային դիմագրա-ւած Ֆինլանտական հսկայ դժուարութիւններուն դէմ: Բողոքի հաւաքին մասնակցած են Ակադեմիային տարրեր հիմնարկներու եւ բաժանմունքներու պա-տասխանատուներ, ակադեմիականներ, որոնք քննա-րկած են Հայաստանի մէջ գիտութեան նկատմամբ կա-ռավարութեան որդեգրած քաղաքականութիւնը:

Հաւաքին մասնակցողներուն անունով խօսք առած է Կիւմ Միքայէլեան, որ ներկայացուցած է Ակադեմիային հանդէպ պարզեց վճարումի պահան-ջը: 2001ի առաջին կիսուն Ակադեմիան նշանակուած գումարէն 260 միլիոն դրամ (473 հազար սովոր) պա-սը յատկացուած է գիտնականներուն 2000ի ամա-թոշակներու վճարումին: Ան չեղած է, որ գիտու-թեան բաժանմունքները նիւթական յատկացում ստա-ցած չեն 1999էն ի վեր:

Գիտնականները արտայայտած են ծայրայեղու-թիւններու դիմել՝ Հայաստանի կառավարութեան դէմ դատ բանալու կամ անոր հրաժարեցումը պա-հանջել

Հիմնականում Մասնա

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՕՐԵՆՔԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ԿԸ ՍՊԱՍԵ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԽՈՀՈՒԹԵԱՆ

Մինչև հիմա զինուորական ծառայություն օրենքի՝ արտերկրի մէջ ապրող լիբանանցիներուն վերաբերող լարեփոխման նախագիծը իր իրազդածման ուղին չէ գտած, եւ տակաւին արտագաղթած երիտասարդներու տագնապը կը մնայ առկայ, հակառակ երեսփոխան Գասարճիի ներկայացուցած զինուորական ծառայության օրենքի լարեփոխման նախագիծի վաւերացումին, նախագիծը մը, որուն մէջ կ'ըսուի, որ եթէ մէկը Ծ տարի անընդմէջ արտերկրի մէջ ապրած է եւ ունի կեցութեան պաշտօնական փաստաթուղթ, ապա կը կացուցուի ծառայութեան:

Քաղաքական շրջանակներ այս հարցին շուրջ արտերկրի մէջ ապրողներուն մօտ անհանգստութիւն կը նկատեն: Անոնք նաեւ կը յայտնեն, թէ լիբանանեան գործօն քաղաքական կողմեր այս առնչութեամբ օրական հարիւրաւոր դիմումներ կը ստանան արտերկրի մէջ ապրողներուն կողմէ, մանաւանդ՝ զբօսաշրջութեան եղանակի սկզբնաւորութեան: Սակայն պատասխանատուներ առարկայական լացատրութիւն չեն գտներ նախագիծին գործադրութեան դանդաղեցման երեւոյթին գծով, մանաւանդ որ արտագաղթած լիբանանցիներ կը վախճան վերադառնալէ օդակայանին մէջ իրենց զաւակներուն չընտելու եւ, հետեւաբար, իրենց համալսարաններէն եւ գործերէն չգրկուելու համար:

Ըստ այդ շրջանակներուն, յստակ է, որ զինուորական ծառայութեան օրենքի լարեփոխման նախագիծը իր լուր երեսներով տակաւին քաջքշուքի առարկայ նիւթ մըն է քաղաքական կողմերուն միջեւ, եւ տակաւին անոր շուրջ երեսփոխանական համաձայնութիւն չէ գոյացած:

Պաշտպանութեան խորհրդարանական յանձնախումբէն ազդուներ կը յայտնեն, թէ այս հարցին կարգ մը կէտերուն շուրջ ընդդիմութիւն եւ տեսակէտներու տարբերութիւն կայ: Յանձնախումբին մէջ տեղի ունեցած քննարկումներուն համաձայն, կայ յստակ միտում՝ շարունակելու զինուորական ծառայութեան օրենքի կիրարկումը, այնպէս՝ ինչպէս որ է, ընկերութեան եւ երիտասարդութեան վրայ իր ունեցած դրական անդրադարձին համար:

Ազդուները կ'ըսեն, որ երեսփոխաններ Ֆարիտ խազէն եւ Մըսպահ Ահապ յանձնախումբի վերջին ժողովին երեսփոխանական կարծի կեցուածքին դիմաց արձանագրեցին որոշ նահանջ մը եւ ընդունեցին միջին լուծում մը, որ կ'ենթադրէ ծառայութեան ժամանակամիջոցը կրճատումը մէկ տարիէն 3 ամիս, մինչդեռ երեսփոխան Փիեռ Ժըմայէլ կառչած մնաց իր նախագէտ ներկայացուցած առաջարկին, որ կ'են-

թադրէ արտագաղթած երիտասարդներուն 15օրեայ ծառայութիւնը իրենց գտնուած երկրներու ղեկավարներուն եւ հիւպատոսարաններուն մէջ, երեւոյթ մը, որ կը ճանչցուի իրեւ «քաղաքացիական ծառայութիւն»:

Ազդուները կը նախատեսեն, որ երեսփոխան Ֆայսալ Տաուաթի գլխաւորութեամբ ստեղծուած ենթախանձնախումբը մշակէ օրենքի լարեփոխման նախագիծ մը, որ պիտի ներկայացուի յանձնախումբի յանձնարարական նիստին: Այս վերջինս կրնայ որոշակի լուծում մը բերել այս հարցին:

Յանձնախումբին մշակելիք պատկերացման գույնգահեռ, գոյութիւն ունի երեսփոխանական աշխուժ շարժում մը, որ կ'աշխատի զինուորական ծառայութեան օրենքի լարեփոխման նախագիծը շարժելու վրայ, մանաւանդ՝ ծառայութեան կանչուած արտագաղթողներու ուղղութեամբ:

Այս առնչութեամբ երեսփոխան Ճորճ Գասարճի հարցում մը ուղղեց կառավարութեան եւ գալի ամրաստանեց օրենքները անդամարուծելու եւ լուսանցքայնացնելու յանցանքով, ինչպէս նաեւ հարց ուղղեց պաշտպանութեան նախարարութեան՝ օրենքի գործադրութեան մէջ նախարարութեան դերակատարութեան գծով:

Քաղաքական շրջանակները կը յայտնեն, որ զինուորական ծառայութեան նաւր տակաւին խաղաղափ չէ ելած, հակառակ անոր որ անոր գործադրութեան սկսելուն անցած է եօթ տարի, որովհետեւ այս նիւթը մնայուն կերպով լանալէն եւ քաջքշուքի նիւթ դարձած է ժողովրդական եւ քաղաքական մակարդակներու վրայ՝ ընդդիմադիրներու եւ կողմնակիցներու միջեւ:

Ինչ կը վերաբերի օրենքի կողմնակիցներուն եւ առաջին հերթին բանակի հրամանատարութեան, անոնք կը նկատեն, որ զինուորական ծառայութեան օրենքը կ'ամրապնդէ ազգային միասնականութիւնը եւ երիտասարդութիւնը կը համակէ պատասխանատուութեան զգացումով, մինչդեռ ընդդիմադիրները կը նկատեն, որ ծառայութիւնը ամբողջ մէկ տարուան կորուստ մըն է երիտասարդութեան ապագայի կերտման երթին:

Երեսփոխաններ Ֆարիտ խազէն եւ Մըսպահ Ահապ զինուորական ծառայութեան օրենքի լարեփոխումը պահանջող ամէնէն յայտնի երեսփոխաններէն էին. անոնք նախագէտ ծառայութեան օրենքի լարե-

ԻԹԻՒՍԱՐ ԾՏԻՏ

Տար. ք. է. ք. 8

ԱՐԴԵՕՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ՞ ԳՈՅԱՏԵՒԵԼ, ԵԹԷ ՊԱՅԹԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Արդեօք գոյութիւն ունի՝ կանխամտածուած «գալթակղութեան դործընթաց» մը, որ ըլլայ կառավարական տնտեսական միջոցառումներուն մուծ երեսը կամ, զադտնի գէնքը, կամ՝ գալթակղութիւններու լարացալստումը եւ լուսացք փոխել կու գան իրրեւ բնական արդիւնք թղթածրարներու յաջորդական լացման՝ սեփականաշնորհման համար հաստատութիւններու պատրաստութեան եւ պետութեան լեռները պակսեցնելու աշխատանքին ծիրին մէջ:

Իրականութեան մէջ դժուար է վերջնական որոշեց պատասխանի յանդիմ երիտիչեալ երկու հետեւութիւններէն, սակայն իրրալաջորդ իրադարձութիւններու ընթացքը՝ խորհրդարանին մէջ պիտուէ քննարկման նիստին սկսած քաղաքական-տնտեսական լարումներէն հասնելով մինչեւ երկտրականութեան գալթակղութիւններուն պալթեցուց խորհրդարանին մէջ, եւ ամրաստանութիւնները ուղղակիօրէն ուղղութեան «Հըզպալլա»ի հասցէին:

Վերջերս յայտ եկած գալթակղութիւնները, իրենց ոչ մանրամասնեալ ընդհանուր խորագիրներուն մէջ կը թուին ըլլալ պետութեան հաստատութիւններէն իւրաքանչիւր անհրաժեշտ անմիջական արտացոլացումը գտած

միւս երեսը, նոյնիսկ եթէ քուարկուած շատ մը գալթակղութիւններ աւելի մեծ են, քան՝ լարացալստուած քիչերը:

«Գալթակղութեան գործընթացին մասին տեղի ունեցած խօսակցութիւնը մեկնարկանութեան եւ վերլուծութեան ոլորտներուն մէջ չէ սահմանափակուած. գոյութիւն ունին իրար նման եւ փոխկապակցուած իրողութիւններ այն թղթածրարներուն միջեւ, որոնք վերջին շարաթներուն լացուեցան յաջորդաբար»:

Երկարականութեան հարցը շատ չի տարբերի միջազգային հեռաձայնային հաղորդակցութեան, «Միտրլ Իսթ»ի եւ թմրեցուցիչ ցանկերու հարցերէն, հակառակ անոր որ այս թղթածրարներէն իւրաքանչիւրը ունի իր «Իւրալատութիւնը»:

Ոչ օրինական միջազգային հեռաձայններու հարցը սկսած, երբ վարմինչեւ երկտրականութեան գալթակղութեան խորհրդարանին մէջ, եւ ամրաստանութիւնները ուղղակիօրէն ուղղութեան «Հըզպալլա»ի հասցէին:

Ետքը գլխաւոր դատախազութիւնը շարժման մէջ դրուեցաւ եւ սկսած հեռաձայնի կեդրոններու սարքաւորումները քակելու աշխատանքը. «Հըզպալլա»

աճապարեց հերքել այս հարցին մէջ իր որեւէ պատասխանատուութիւն ունենալը:

«Միտրլ Իսթ»ի հարցին մէջ, եւ հակառակ անոր որ մինչեւ հիմա լուծումը արգելքներու կը հանդիպի, այսուհանդերձ կուսակցական կողմեր ստիպուեցան նահանջել եւ լանակցութիւնները սահմանափակուած ձգել օդանաւային ընկերութեան տնօրէնութեան եւ սեփականութեան միջեւ՝ ընկերութիւնը դէպի սնանկացում տանող միտումին դէմ կենալու երեւոյթով ներկայանալէ ետք:

Սակայն երկտրականութեան հարցը աւելի ամբողջական ընդթ ստացաւ, նկատի ունենալով մանաւանդ, որ այս հարցը ուղղակիօրէն կապ ունի քաղաքական եւ վարչական լարեփոխումներու գործընթացին հետ:

Սակայն կառավարութեան գործունէութիւնը նիւթական լեռները պակսեցնելու ուղղութեամբ օրէ օր անպայմանօրէն պիտի կուտի լարի կուտակուած քաղաքական փտածութեան. ասիկա պատճառ պիտի դառնայ (եթէ կառավարութիւնը որոշէ շարունակել միւնչեւ վերջ), որ ան գտնուի այս փտածութեան հետ անմիջական լարումի վիճակին մէջ:

«ՆԱԿԱՐ»

ՇԱՐԵՑԷՔ 15,000 ՏՈԼԱՐԻ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ

Win up to \$15,000 in prizes

Peugeot 206
Trip to Cyprus for 2 persons (6 nights)
2 FUJITSU air condition
2 General Electric washing machine
Sony HI FI DX5
Philips DVD 711 with zoom
Panasonic TV 21 inch
Sony TV 21 inch
Continental oven



Peugeot 206 ինքնաշարժ մը
2 անձի Կիպրոս ճամբորդութիւն (6 գիշեր)
2FUJITSU էր քոնտիսիոնէ
2 General Electric լուացքի մեքենայ
Sony հայ ֆայ Dx5
Philips DVD 711 գուռով
Panasonic հեռատեսիլ 21 ինչ
Sony հեռատեսիլ 21 ինչ
Ըոնթինենթալ փուռ



ԱՅԼԱԶԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԿԻՆԵՐԸ

●ԼԵՒԻՆՆ ՊԵՏԵՐՆԻՔՈՒՐ



«Լ'Օրէալ» կայսրու-
թեան միակ ժառանգորդ
72 տարեկան Լիլիան Պե-
թերնքուր աշխարհի ամէ-
նէն հարուստ կիներն է:
Այս ֆրանսուհին հարու-
ստութիւնը կը հասնի 15,2
միլիարդ տոլարի...

●ԼԵՒԻՆՆ ՊԵՏԵՐՆԻՔՈՒՐ



Իր եկամուտները
աւելցնելու համար Անգ-
լիոյ թագուհին վերջերս
հիշեցաւ իր ընդար-
ձակ կալուածներուն մէջ
հասնող խնձորները...

Թագուհին նաեւ ամ-
սական յաւելում որոշեց
Պաքիստանէն 700
պաշտօնէականներուն: Այս-
պէս խոհարարներն ու
սպասուհիները տարե-
կան 13 - 14 հազար տոլար
կը շահին, իսկ արքայա-
կան ընտանիքին ճաշ մա-
տուցողները 22,500 տո-
լար...

Էլիզապէթ թագուհին
եկամուտը կը հաշուէ
շուրջ 450 միլիոն տոլար:

●ՊԵՏԵՐՆԻՔՈՒՐ ՍՓՈՐՏ



Նշանաւոր երգչուհին
իր շրջապատյուններէն եւ
երկրորդական շահած է 40,5
միլիոն տոլար, իսկ երկ-
րորդ ծախսակաւաւա-
կէն ծախած է 8,1 միլիոն
օրինակ...

●ՃՈՒՆԻԱ ՌՈՊԵՐՈՅ



Անուանի դերասա-
նուհին միակ կին դերա-
սանուհին է, որ 20 մի-
լիոն տոլար գանձած է
մէկ ժապաւէնի մէջ իր
ստանձնած դերին հա-
մար:

Ռոպերթի եկամուտը
կը հասնի շուրջ 18,9 մի-
լիոն տոլարի:

●ՃԵՆԻՖԵՐ ԱՆԻՍԹԵՐ



Պատկերասփիւնի
«Ֆրէնտ» յայտագրի դե-
րասանուհին իւրաքան-
չիւր 1.5 միլիոնի համար կը
գանձէ 750 հազար տո-
լար, իսկ անոր եկամուտը
կը հասնի 15,3 միլիոն տո-
լարի:

●ՃԵՆԻՖԵՐ ԱՆԻՍԹԵՐ



Երգչուհի - դերասա-
նուհի Ճէնիֆեր Անիսթե-
րի մահուան արուեստագի-
տուհի մըն է: Ան իր ճամ-
բորդութիւններուն ըն-
թացքին կը տեղափոխուի
30 հոգիէ բաղկացած
անձնակազմով մը: Անոր
սենեակները պէտք է
զարդարուած ըլլան հազ-
ուադիւս ծաղիկներով եւ
բուրումնաւէտ մոմերով:
Ան օրին մէկը սպառ-
նացած է ջնջել իր մէկ
համերգը, որովհետեւ
հաւանած չէ իր լոմի վար-
դագոյն պատերը:
Ճ. Անիսթեֆ եկամուտը կը
հասնի 14,4 միլիոն տոլարի:

ՇՈՒՆԻԱ ՌՈՊԵՐՈՅ

ՈՐՔԱՆ ՀԱՄԱՐՈՒՄ ՈՒՆԻՔ
ԴՈՒՔ ՉԵՐ ՆԿԱՏՄԱՄԲ

Զգայ աւելի գէշ լան,
երբ մէկը իր անձին հան-
դէպ համարումը կը
կորսնցնէ ու կը դառնայ
բարոյութիւններու կոյտ մը՝
ի վերջոյ ինչպիսի համար
հոգեկան անկումի վերա-
պը:

Մինչդեռ, երբ մեր հա-
մարումը կ'աւելնայ մեր
անձին հանդէպ, առաջին
հերթին հոգեպէս հան-
գիստ, ուրախ, քաջ եւ
տոկոս կը զգանք:

Ահա թէ ի՞նչ կը թելադ-
րեն հոգեբանները մեր
անձին հանդէպ մեր հա-
մարումը աւելցնելու հա-
մար:

ՓՈՔՐ
